ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2019/49

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝

Մասնակից՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի,

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչներ՝ Մ. Սարգսյանի, Լ. Սահակյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.04.2019թ. թիվ 26/26-1/6467-2019 գրությամբ «Ինտերքլին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Ինտերքլին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Մասնավորապես՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներից «Ինտերքլին» ՍՊԸ-ի մոտ (ՀՎՀՀ՝ 01249441, հասցե՝ ք. Երևան, Պարոնյան փող., 8 շենք, գրասենյակ 6, էլ.հասցե. info@cleanhouse.am) ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի ա/ ենթակետով նախատեսված հիմքերը՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն պայմանագիրը կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը: Համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ Ձեզ ենք ներկայացնում «Ինտերքլին» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:»:

2. <u>«Ինտերքլին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.05.2019թ. գրությամբ դիմել է «Ինտերքլին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.04.2019թ. թիվ 26/26-1/6467-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

«Ինտերքլին» ՍՊԸ-ն ներկայացնելով դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար <<Մաքրման ծառայություն-ների>> ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ինտերքլին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2019թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ ընթացակարգի հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվել «Ինտերքլին» ՍՊԸ-ն:

Իսկ նույն արձանագրության 2 կետի համաձայն՝ հաղթող մասնակցի հետ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ /անգործության ժամկետը լրանալուց հետո՝ 27.02.2019թ./ կնքվելու է գնման պայմանագիր:

Ս.թ. փետրվարի 28-ին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը էլեկտրոնային եղանակով տրամադրել է «Ինտերքլին» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում ստորագրել դրանք և ներկայացնել պատվիրատուին:

«Ինտերքլին» ՍՊԸ-ն փոստային առաքման եղանակով կնքված պայմանագիրը ս.թ. մարտի 15-ին /սահմանված ժամկետում/ ուղարկել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով ԳՀ գնահատող հանձնաժողովին /համապատասխան ապացույցը կցվում է/:

Սակայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.03.2019թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1 կետի համաձայն՝ հրավերի պահանջներին համապատասխան «Ինտերքլին» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի նախագիծը՝ զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Վերոհիշյալ արձանագրության հիման վրա 21.03.2019թ. համապատասխան փաստա-թղթերը ՀՀ ՖՆ-ն ներկայացրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների>> ցուցակում ներառելու համար /ՍՑ-ԱՄ-2019/64/:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նույն 22.03.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում արդենիսկ նախաձեռվել էր ընթացակարգ՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառելու համար:

Այդ կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև «Ինտերքլին» ՍՊԸ-ն իր կողմից 25.03.2018թ. ՀՀ ՖՆ-ին ուղված նամակով, մասնավորապես՝ <<25.03.2019թ. ուսումնասիրել ենք Գնումների պաշտոնական կայքը, որտեղ ակնհայտ է,որ դուք մեր ընկերության տվյալները ուղարկել եք Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

<<Սև ցուցակում>> ներգրավելու համար, բայց միևնույն ժամանակ ծանոթանալով Ձեր 22.03.2019թ. ուղարկված նամակի հետ, որտեղ մեր ընկերությանը տրամադրել եք մեկ աշխատանքային օր պայմանագրում առկա որոշակի այլ փաստաթղթեր շտկելու և ներկայացնելու համար՝ նույնիսկ մեզ չտեղեկացնելով, որ նաև նախաձեռնել եք մեր ընկերությանը <<Սև ցուցակում>> ներգրավելու համար: Անկեղծ անհասկանալի է դառնում,որ դուք ստանալով մեր պայամանագիրը և մեր Ընկերության հետ միասին աշխատելով պայմանագրի շուրջ միևնույն ժամանակ մեր տվյալները ներկայացրել եք Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին <<Սև ցուցակում>> ներգրավելու համար՝ պայմանագիրը չներկայացնելու պատճառով: Խնդրում ենք տալ պարզաբանում ստեղծված իրավիճակի մասին>>:

Իսկ արդեն, ի լրումն 21.03.2019թ. գրության, ՀՀ ՖՆ-ն 02.04.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին էր ներկայացրել Ն/18-3/2283-2019 գրությունը, որով ՀՀ ՖՆ նախաձեռնել է ևս մեկ ընթացակարգ՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների>> ցուցակում ներառելու համար /ՍՑ-ԱՄ-2019/79/, այն հիմքով, որ պայմանագրի մեջ պայմանագրի ապահովումը հաստատված և լրացված չէ մասնակցի կողմից և գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել «Ինտերքլին» ՍՊԸ-ին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել և ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխան լրացված և հաստատված պայանագրի ապահովումը՝ ինչը Ընկերությունը չի կատարել:

Այնուհետև կապված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց նոր նշանակումների հետ ՍՑ-ԱՄ-2019/64 և ՍՑ-ԱՄ-2019/79 ընթացակարգերը հետ են կանչվել և արդեն մեկ ընթացակարգի տեսքով մակագրվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի վարույթում և ստացել ՍՑ-ԼՕ-2019/49 ծածկագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ-ցության դադարեցմանը.

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց.

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայ-մա¬նա¬գիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթա¬շրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ...մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված>>:

Այսպիսով, «Ինտերքլին» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայ¬մա¬նա¬գիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (28.02.2019թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 15.03.2019թ. ներառյալ) 15.03.2019թ. թղթային /կցվում է/՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին, սակայն գնահատող հանձնաժողովը 18.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1 կետով արձանագրել է, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն իբրև թե չի ներկայացրել իր կողմից ստորագրած պայմանագիրը:

Մինչդեռ, այն փաստը, որ Պատվիրատուն ստացել է պայմանագիրը, փաստում է նաև գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրությունը, որով «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնահատող հանձնաժողովը արձանագրել է՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ն հրավերի պահանջներին համապատասխան սահմանված ժամկետում կապի կազմակերպության՝ Հայփոստի միջոցով ս/թ մարտի 15-ին ուղարկել է իր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը .../կցվում է/:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նույն 22.03.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում արդենիսկ նախաձեռվել էր ընթացակարգ՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառելու համար:

Այդ կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև «Ինտերքլին» ՍՊԸ-ն իր կողմից 25.03.2018թ. ՀՀ ՖՆ-ին ուղված էլեկտրոնային նամակով (կցվում է), որով Ընկերությունը մասնավորապես հայտնել է հետևյալը. <<25.03.2019թ. ուսումնասիրել ենք Գնումների պաշտոնական կայքը, որտեղ ակնհայտ է,որ դուք մեր ընկերության տվյալները ուղարկել եք Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին <<Սև ցուցակում>> ներգրավելու համար, բայց միևնույն ժամանակ ծանոթանալով Ձեր 22.03.2019թ. ուղարկված նամակի հետ, որտեղ մեր ընկերությանը տրամադրել եք մեկ աշխատանքային օր պայմանագրում առկա որոշակի այլ փաստաթղթեր շտկելու և ներկայացնելու համար՝ նույնիսկ մեզ չտեղեկացնելով, որ նաև նախաձեռնել եք մեր ընկերությանը <<Սև ցուցակում>> ներգրավելու համար:

Անկեղծ անհասկանալի է դառնում,որ դուք ստանալով մեր պայամանագիրը և մեր Ընկերության հետ միասին աշխատելով պայմանագրի շուրջ միևնույն ժամանակ մեր տվյալները ներկայացրել եք Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին <<Սև ցուցակում>> ներգրավելու համար՝ պայմանագիրը չներկայացնելու պատճառով:

Խնդրում ենք տալ պարզաբանում ստեղծված իրավիճակի մասին>>:

Վկայակոչված փաստերը հստակ ապացուցում եմ, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց: Ավելին, բոլոր հնարավոր թույլատրելի եղանակներով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրա¬տուին՝ սակայն պատվիրատուն անհասկանալի պայմաններում՝ որոշել է զրկել «Ինտերքլին» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

«Ինտերքլին» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց՝ ընդամենը ցանկացել է, որ ՀՀ ՖՆ-ն հետ կանչի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի վարույթում նախաձեռնված նախորդ /ՍՑ-ԱՄ-2019/64/ ընթացակարգը, քանի որ անտրամաբանական է շարունակել աշխատել Պատվիրատուի հետ և շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ով չհիմնավորված փաստերի առկայության դեպքում ստեղծում է մի իրավիճակ, որ բարեխիղճ և իր ոլորտում երկար տարիների փորձ ունեցող Ընկերությունը անհիմն կարող է ներառվել <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների>> ցուցակում:

Ի պատասխան 25.03.2019թ. «Ինտերքլին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության ՀՀ ՖՆ-ն պատասխանել է՝ <<Սույնով տեղեկացնում ենք, որ մեր կողմից իրականացված բոլոր գործողությունները համապատասխանում են օրենսդրության պահանջներին, իսկ գնահատող հանձնաժողովի նիստի բոլոր արձանագրությունները /կցվում է/ Ձեզ ծանուցվել է armeps համակարգի կամ էլ. փոստի միջոցով>>:

Վերոնշված փաստը նույնպես հստակ ապացուցում է, որ նույնիսկ ՀՀ ՖՆ չի կարողանում պարզաբանել իր կողմից կայացրած որոշումների տրամաբանությունը և օրինականությունը, այդպես էլ չտալով պարզաբանում «Ինտերքլին» ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու և միևնույն ժամանակ նաև շտկում պահանջելու վերաբերյալ:

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնահատող հանձնաժողովի գործողություններից հետևում է, որ գնահատող հանձնաժողովը չի կարողացել հիմնավորել նաև իր գործողությունները՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար մեկ աշխատանքային օր ժամկետ տրամադրելու հանգամանքը, մասնավորապես գնահատող հանձնաժողովը, նախ՝

1) Մերժել «Ինտերքլին» ՍՊԸ-ի հայտը՝ պայմանագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով,

2) Վերոնշված հիմքով նախաձեռնել <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների>> ցուցակում «Ինտերքլին» ՍՊԸ-ին ներառելու ընթացակարգ,

3) «Ինտերքլին» ՍՊԸ-ին տրամադրել մեկ աշխատանքային օր՝ ստացված պայմանագրում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար,

4) Այնուհետև, նորից մերժել «Ինտերքլին» ՍՊԸ-ի հայտը՝ կնքված և սահմանված ժամկետում ներկայացրած պայմանագրում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ չկա որևէ կարգավորում, որ թույլ կտար Պատվիրատուին առաջնորդվել Օրենքի կամ Կարգի դրույթով և Ընկերությանը տալ կնքված և ժամկետում ներկայացրած պայմանագրում կատարել շտկում, ավելին՝ այդ շտկման համար տրամադրել մեկ աշխատանքային օր:

Եվ այսպես, Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը

նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Իսկ արդեն Կարգի 49 կետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքվելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովն ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն կարգի 43-48-րդ կետերով նախատեսված պայմանները:

Կարգի վերոնշված կետերի բովանդակությունից ուղակիորեն հետևում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ «Ինտերքլին» ՍՊԸ-ին տրամադրել շտկման հնարավորություն, հետևյալ բովանդակությամբ՝

Կարգի 47-րդ կետը հստակ սահմանում է, թե որ դեպքում գնահատող հանձնաժողովը իրավունք ունի մասնակցին հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հնարավորություն տալու շտկել այդ անհամապատասխանությունները, դրանք են առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում: Այս պարագայում մենք գործ ունենք կնքված պայմանագրի հետ և Կարգի 47 կետի դրույթները չեն կարող վերաբերելի լինեն սույն դեպքին:

Իսկ ինչ վերաբերվում է Կարգի 49-րդ կետին, ապա այստեղ նույնպես հստակ սահմանված է, թե երբ կարող է կիրառվել Կարգի 43-48-րդ կետերը, դրանք են՝ ընտրված

մասնակցի կողմից պայմանագիրը չկնքվելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքերը: Այս պարագայում «Ինտերքլին» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց: Բացի այդ առկա չէ նաև մասնակցին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու հիմք, քանզի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Մինչդեռ ակնհայտ է, որ տվյալ դեպքում մասնակիցը չէր կարող զրկվել պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ առկա է ապացույց, որ սահմանված ժամկետում ներկայացվել է կնքված պայմանագիրը:

Արդյունքում, գտնում ենք, որ խախտվել է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, Կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի պահանջները՝ ինչը հանգեցրել է «Ինտերքլին» ՍՊԸ-ի պայամանագիր կնքելու գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքի խախտմանը:

Մինչդեռ, ինչպես վկայում են վերոշարադրված փաստերը, «Ինտերքլին» ՍՊԸ-ն չի խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն և չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել, որ նշված իրավիճակում և փաստական հանգամանքներում չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնա¬կցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են հաշվի առնել նշված փաստերը և «Ինտերքլին» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2019/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ինտերքլին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2019թ.-ին թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշման համաձայն՝ ընթացակարգի հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվել «Ինտերքլին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 28.02.2019թ.-ին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը էլեկտրոնային եղանակով տրամադրել է «Ինտերքլին» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում ստորագրել և ներկայացնել պատվիրատուին:

«Ինտերքլին» ՍՊԸ-ն փոստային առաքման եղանակով կնքված պայմանագիրը սահմանված ժամկետում՝ 15.03.2019թ.-ին, ուղարկել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ.-ին թիվ 5 արձանագրության 1 կետով կայացված որոշման համաձայն՝ հրավերի պահանջներին համապատասխան «Ինտերքլին» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի նախագիծը՝ զրկվելով պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ.-ի թիվ 6 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ն համապատասխան սահմանված ժամկետում կապի կազմակերպության՝ Հայփոստի միջոցով 15.03.2019թ.-ին ուղարկել է իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովումը, որը հաստատված և լրացվուած չէ մասնակցի կողմից և չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության արդեն 2-րդ կետի համաձայն՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ օրենքի 3-րդ կետը, մասնակցին չի զրկել պայմանագիր կնքելու իրավունքից: Եվ նույն արձանագրությամբ հնարավորություն է տվել վերջինիս ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխանող պայմանագրի ապահովում:

22.03.2019թ.-ի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել «Ինտերքլին» ՍՊԸ-ին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել և ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխան լրացված և հաստատված պայանագրի ապահովումը՝ այն հիմքով, որ պայմանագրին կից ներկայացված ապահովումը հաստատված և լրացված չէ մասնակցի կողմից:

«Ինտերքլին» ՍՊԸ-ն չի ներկայացրել հրավերի պահանջներին համապատասխանող պայմանագրի ապահովումը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.04.2019թ.-ի թիվ 26/26-1/6467-2019 գրությամբ «Ինտերքլին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Ինտերքլին» ՍՊԸ-ն և Հանձնաժողովի որոշման հիման վրա ճանաչվել է ընտրված/հաղթող/ մասնակից:

28.02.2019թ.-ին Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, այն է՝ ծանուցման

հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված և լրացվւսծ հրավերի պահանջներին համապատասխանող պայմանագրի ապահովում:

Տվյալ դեպքում ընտրված/հաղթող/ մասնակցի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում իր կողմից հաստատված և լրացվւսծ հրավերի պահանջներին համապատասխանող պայմանագրի ապահովում չներկայացնելու հանգամանքը, Բողոքներ քննող անձը դիտարկում է և համարում՝ որպես պայմանագիր կնքելուց հրաժարում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով հաստատված և լրացվւսծ պայմանագրի ապահովում, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.04.2019թ.-ի թիվ 26/26-1/6467-2019 գրությամբ «Ինտերքլին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ինտերքլին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**